ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3
«ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-24-10/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

08-ը ապրիլի 2024թ.
Ժամը 11[00]

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲՎ ԶԲՖԿԾ պետ, Ա. Պապյան
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲՎ ԶԲ բաժնի պետ Ա. Շլեպչյան
Գնումները համակարգող՝
ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչության ԳԿ 3-րդ բաժնի գլխավոր մասնագետ, Ա. Մաղաքյան

Հանձնաժողովն արձանագրեց հայտերի բացման փաստը և որոշեց նիստը շարունակել մասնակիցների կողմից ներկայացված հայտերն ուսումնասիրելուց հետո:

16.04.2024թ., ժամը 10:00-ին կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները.

Ընդունել ի գիտություն, որ **16.04.2024թ., ժամը 10:00**-ին կայացած նիստում բացակայում էր հանձնաժողովի անդամ՝ ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲՎ ԶԲ բաժնի գլխավոր մասնագետ Ա. Համբարձումյանը:

«ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-24-10/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.
(Ա. Մաղաքյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-24-10/1» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-24-10/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և այդպիսիք չճանաչված մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:
6. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
7. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2 դեմ՝ 0:

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցի մասին.

(Ա. Մաղաքյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար «**Ենջասենյակի կահույքի**» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-24-10/1» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակիցների անվանումը
1.	ԱՁ Արման Առաքելյան
2.	ԱՁ Վարդան Ավետիսյան
3.	«Հայր և որդի Գյոդակյաններ» ՍՊԸ
4.	«Լեգո-Քոնստրաքշն» ՍՊԸ
5.	«Ռաֆ-Օջախ» ՍՊԸ
6.	«Օլանդա» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

2. «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-24-10/1» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.

(Ա. Մաղաքյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի.

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են.

2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-24-10/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ հետևյալ դեպքի.

«Լեգո-Քոնստրաքշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում Հավելված 1.1-ում՝ տեխնիկական բնութագրում բացակայում է հրավերով սահմանված՝ «Տեսքը և մնացած չափերը՝ համաձայն էսքիզի» դրույթը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել **«Լեգո-Քոնստրաքշն» ՍՊԸ-ին** մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

18.04.2024թ., ժամը 10:40-ին կայացած նիստում հանձնաժողովն արձանագրեց, որ **«Լեգո-Քոնստրաքշն» ՍՊԸ-ի** կողմից սահմանված ժամկետում և կարգով շտկվել է արձանագրված անհամապատասխանությունը, ուստի հիմք ընդունելով վերոնշված հանգամանքը, գնահատող հանձնաժողովը որոշեց վերջինիս հայտը գնահատել բավարար՝ հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

3. Մասնակիցների առաջարկած գները և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

(Ա. Մաղաքյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության և սույն ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Գնման առարկա	Չ/մ	Քանակը	Նախահաշվային գումարը	Մրցույթին մասնակցող կազմակերպությունների			
					Անվանումները	Գնային առաջարկ /ՀՀ դրամ/		
						Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գին
1	Ննջասենյակի կահույք (Մահճակալ զինվորական ներքնակով (մահճակալ 2 հատ, աստիճան, ներքնակ 2 հատ))	հատ	1140	135,192,600	ԱՁ Արման Առաքելյան	89,300,000	17,860,000	107,160,000
					ԱՁ Վարդան Ավետիսյան	102,980,000	20,596,000	123,576,000
					«Հայր և որդի Գյոդակյաններ» ՍՊԸ	95,047,500	19,009,500	114,057,000
					«Օլանդա» ՍՊԸ	98,781,000	19,756,200	118,537,200
					«Լեգո-Քոնստրաքշն» ՍՊԸ	108,325,000	21,665,000	129,990,000
					«Ռաֆ-Օջախ» ՍՊԸ	108,860,500	21,772,100	130,632,600

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը (հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը), ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են (ճիշտ են):

3.3 Ըստ ներկայացված տվյալների՝ մասնակիցները հանդիսանում են ԱԱՀ վճարող:

3.4 Մասնակիցների հետ բանակցություն չի վարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-24-10/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և այդպիսիք չճանաչված մասնակիցների որոշման մասին.

(Ա. Մաղաքյան)

4.1 **18.04.2024թ.-ին՝** հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը, Armeps (www.armeps.am) համակարգում էլեկտրոնային գնահատման արդյունքում, գնահատող հանձնաժողովը որոշեց ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-24-10/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար գնահատված մասնակիցներից՝ ընտրված մասնակից ճանաչել՝ **ԱՁ Արման Առաքելյանին**՝ իսկ մնացած մասնակիցներին ճանաչել այդպիսիք չճանաչված մասնակիցներ:

4.2 Գնահատող հանձնաժողովը հաստատեց «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-24-10/1» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

4.3 Սույն ընթացակարգում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն սահմանվում է տասնօրյա անգործության ժամկետ:

4.4 Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-24-10/1» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

(Ա. Մաղաքյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-24-10/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

(Ա. Մաղաքյան)

6.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

7. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-24-10/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել ոչ ուշ, քան գնման պայմանագիր չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 11:00-ն, ք. Երևան Բագրևանդի 5 հասցեում՝ ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Ա. Պապյան

Գնահատող Ա. Շլեպչյան

Գնահատող Ա. Համբարձումյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մաղաքյան